



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«16» փետրվարի 2018թ.

N 1-2018/01

ք.Ստեփանակերտ

Մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.2 կետի թ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության իրականացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին» կանոնակարգի 10-րդ կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 16.02.2018թ. նիստի 1-2018 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

Ընկերության 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

- Ս. Թևոսյան – Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահ
- Հ. Բոյաջյան - Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ
- Ա. Պետրոսյան - Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահ:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«16» փետրվարի 2018թ.

N 1-2018/02

ք.Ստեփանակերտ

**2018թ էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումների հաստատման
մասին**

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.2 կետի բ) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 16.02.2018թ. նիստի 1-2018 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2018թ էլեկտրաէներգիայի արտադրության պլանը :

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«16» փետրվարի 2018թ.

N 1-2018/03

ք.Ստեփանակերտ

2018թ եկամուտների և ծախսերի կանխատեսումների հաստատման մասին

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.2 կետի բ) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 16.02.2018թ. նիստի 1-2018 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

Հաստատել ընկերության 2018թ. եկամուտների և ծախսերի պլանը:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան



**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ**

28 փետրվարի 2018 թ.

N 2-2018/01

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀԱՍԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՏՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի ի) կետի իդ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.2 կետի գ) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 28.02.2018թ. նիստի 2-2018 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության աշխատակազմի հասիքացուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թ. մարտի 1-ից:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան

<<ԱՐՑԱԽ ՀԷԿ>> Բաց Բաժնետիրական Ընկերության

Տնօրենների Խորհուրդ

Որոշում

<<21>> մայիսի, 2018թ

N 3-2018

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ԱՀ օրենքի 84-րդ հոդվածը, <<Արցախի ՀԷԿ>> բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.4 կետը և <<Արցախի ՀԷԿ>> բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 21.05.2018թ. նիստի 4-2018 արձանագրությունը՝ <<Արցախի ՀԷԿ>> բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդը որոշում է՝

1. 2018թ. հունիսի 27-ին ,Ժամը 11:00-ին, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ն. Ստեփանյանի 35 հասցեում <<Վալէքս Գարդեն>> համալիրի մեծ կոնֆերենս սրահում գումարել <<Արցախի ՀԷԿ>> բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:
2. Հաստատել <<Արցախի ՀԷԿ>> բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովի օրակարգը՝ համաձայն հավելվածի :
3. Հաստատել <<Արցախի ՀԷԿ>> բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովի քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելվածի :
4. <<Արցախի ՀԷԿ>> բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովին առաջարկել <<Ասատրյանս>> ՄՊԸ, որպես 2018թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձ:
5. Հաստատել <<Լև-1>> տեղամասի աշխատակազմի հաստիքացուցակը:
6. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների իրականացումը :
7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի մայիսի 21-ին:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«09» հուլիսի 2018 թ.

N 5-2018/01

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.15 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 09.07.2018թ. նիստի 4-2018 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. Ընկերության խորհրդի նախագահ ընտրել Արայիկ Հարությունյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 09-ից:

Խորհրդի նախագահ՝

Ա. Հարությունյան



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«09» հուլիսի 2018 թ.

N 5-2018/02

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը,
«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության
12.10 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության
տնօրենների խորհրդի 09.07.2018թ. նիստի 4-2018 արձանագրությունը՝
«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների
խորհուրդը որոշում է՝

1. Ընկերության խորհրդի քարտուղար ընտրել Սերյոժա
Մնացականյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 09-ից:

Խորհրդի նախագահ՝

Ա. Հարությունյան



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«09» հուլիսի 2018 թ.

N 5-2018/03

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 7. կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 09.07.2018թ. նիստի 4-2018 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. 07.12.2018թ-ին թողարկել մինչև 7.000.000(յոթ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, մինչև 70.000(յոթանասուն հազար) հատ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր: Արժեկտրոնի տոկոսադրույքը սահմանել տարեկան 9 (ինը) տոկոս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 09-ից:

Խորհրդի նախագահ՝

Ա.Հարությունյան



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«09» հուլիսի 2018 թ.

N 5-2018/04

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 6. կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 09.07.2018թ. նիստի 4-2018 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Քարվաճառ» ՀԷԿ-ի կառուցումը:
Հանձնարարել ընկերության գլխավոր տնօրենին կնքել նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման պայմանագիր «Հիդրոտեներգետիկա» ՍՊԸ-ի հետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 09-ից:

Խորհրդի նախագահ՝

Ա.Հարությունյան